

ԲԱՐԵՐԱՐ ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 50,000 ՏՈԼԱՐ ՆՈՒԻՐԵՑ ԴՈԿՏ. ԶԱԼԷՆ ՄԱՐՐԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ

ՀԱԳ-ի բարերարներէն Տիար Ռաֆֆի Մանուկեան 50,000 տոլար նուիրեց նորահաստատ «ՀԱԳ Դոկտ. Զալէն Մարրլեան կրթական ֆոնտ»-ին, արժեւորելով դոկտ. Զ. Մարրլեանի տնօրէնութեան 50 տարիները (1967-2017):

Մեր յարուկ շնորհակալութիւնները բարերարին:

ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ըստ պետական օրէնքի, ՀԱԳ-ի ծնողները այս տարի ընտրեցին իրենց ներկայացուցչական մարմինը, որ իր հերթին ընտրեց իր դիւանը: Այս վարչութեան պաշտօնավարութիւնը կ'երկարի մինչեւ 2020 եւ ունի հետեւեալ կազմը.

- Տիկին Կարինէ Զոլագեան (Ատենապետուհի)
- Տիկին Ալին Պօղոսեան (Փոխ-ատենապետուհի)
- Տիկին Անահիտ Պասէթ (Ատենադպրուհի)
- Պարոն Մարտիկ Շեքերեան (Գանձապահ)
- Տիկիններ Հուրի Շահինեան եւ Գոհար Գրիգորեան (Հաշուեքննիչ)

Տիկնայք Վանեսա Ֆրանսիս, Թամար Մեսճեան, Սիլվա Սայիլեան, Սիլվա Մինասեան, Զատ Սայէդ, Կրեթթա Զէյթունցեան եւ Սիլվա Լեփեճեան (խորհրդականներ):



We acknowledge and appreciate the kind sponsorship of FIDELITY Assurance and Reinsurance Co. SAL for AEC's basketball team.



ՀԱԳ ՊԱՍՔԷԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԸ

Մարզիչ՝ Պր. Սեպուհ Պապիկեան
Նսրած, ծախէն աջ՝ Կերի Լեփեճեան, Ռըտա Աթուի, Անթօնի Օպէյտ:

Ուրբի, ծախէն աջ՝ Հիւսէյն ալ Օմէյրի, Ալօ Տէրտէրեան, Սերժ Թերզեան, Կերի Զէյթունցեան:

Նկարէն կը բացակայի Ալէն Արաքսէիսեան:

ՎՐԻՊԱԿ

«Լրատու»ի նախորդ թիւին մէջ, «Թարգմանչաց» արեւնամարզանքի հիւր բանախօս, Համազգայինի Գրատարածի պատասխանատու Տիկին Արին Գալուստեանի մականունը թիրիմացաբար սխալ գրուած էր: Կը սրբագրենք վրիպումը ու կը հայցենք իր ներողամտութիւնը:



ՈՒՍՈՒՑՉԱՅ ՕՐ

Բարի սովորության համաձայն, այս տարի եւս թէ՛ աշակերտները, թէ՛ Ծնողաց մարմինը, պատշաճ յայտագիրներով նշեցին Ուսուցիչներու փոօնը:

2 Մարտ 2018-ին, 11-րդ եւ 12-րդ դասարաններու միացեալ ջանքերով կազմակերպուեցաւ ատենամարզանք, որու ընթացքին աշակերտները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին ուսուցիչներուն, ապա, ուսուցիչներու մասնակցութեամբ զանազան խաղերով կրցան ստեղծել հաճելի մթնոլորտ մը:

Իսկ 8 Մարտ 2018-ի յետմիջօրէին, Ծնողաց յանձնախումբի տիկինները, գեղեցկօրէն յար-



դարուած սրահին մէջ, իրենց ճարտար ձեռքերով պատրաստուած ճաշերու սպասարկումով իրենց յարգանքն ու շնորհակալութիւնը յայտնեցին ուսուցչական կազմին:

Իսօք առին տիկնայք Կարինէ Չոլագեան եւ Թամար Մեսճեան: Յանուն ուսուցչակազմին շնորհակալութեան եւ շնորհաւորութեան իսօք արտասանեց տնօրէնը:



► Ուրբաթ, 16 Մարտ 2018-ին, 8-րդ եւ 9-րդ դասարաններու հայերէնի միացեալ դասը վարեց տիկին Շաղիկ Փափագեան-Մկրտիչեան, որ վերլուծեց Վահէ Օշականի «Նոր Մանչուկը» քերթուածը: Աշակերտները ապրեցան գրական վայելքի պահ մը:



► 8-րդ դասարանի աշակերտները, իրենց անգլերէնի ուսուցչուհիին՝ տիկին Հուրի Գայմագամեանի առաջնորդութեամբ այցելեցին Պէյրութի փարոսի շրջանը (Մանարա), ուր նկարագրական շարադրութիւն մը գրեցին, գործնականացնելով իրենց սորված գիտելիքները:

Միրելի շրջանասարտ, նախկին աշակերտ կամ ուսուցիչ,

Կ
Ո
Չ

Կոչ կ'ուղղենք բոլորիդ, որ «Լրարու»ի ընթերցողներուն հետ բաժնեկցիք Հայ Աւերարանական Գոյլճէն ներս ձեր անցուցած օրերու անմոռանալի յուշերը: Անցեալի ռգելոյնումը մեր դպրոցի պատմականութիւնը վկայող կարեւոր միջոց մըն է, ինչպէս նաեւ զօրոյ կապ մը՝ սերունդներու միջեւ: Էական է որ նորերը գիրնան, թէ իրենցմէ՛ առաջ այս դպրոցէն անցած են ուրիշներ, ինչպէս որ իրենցմէ՛ ետք ալ պիտի գան նորեր, պահպանելով Մայր Կրթարանին յարաբերումը:

Ձեր հայերէն կամ անգլերէն գրութիւնները կրնաք դրկել a_e_c@cyberia.net.lb հասցէին:

ՄՕՏ ՕՐԷՆ

www.aecbeirut.edu.lb

ՀԱԳ-ի պաշտօնական կայքը

ՄՕՏ ՕՐԷՆ

ԱՎՈՒՄԲԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

| ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎՈՒՄԲ

Ակումբի անդամները կահանդը դիմաորեցին 21 Դեկտեմբեր 2017-ին «Պատկեր» ճաշարանին մէջ, առաջնորդութեամբ ակումբի խորհրդատու տիկին Անի Պիլալեանի:

Հայկական համեղ ճաշեր ճաշակելէ ետք, անոնք տեսերիզի վրայ ծանօթացան հայկական գորգի նախշերուն իմաստներուն, ապա ձեռային աշխատանք կատարելով իրացուցին իրենց ստացած գիտելիքները:

Ներկայ էր նաեւ երգիչ Վիգէն Տիշչէքէնեան, որ ճոխացուց մթնոլորտը հայերէն երգերով:



| ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՎՈՒՄԲ

29 Դեկտեմբեր 2017-ին դպրոցի պատուակալ տնօրէն եւ պատմութեան ակումբի խորհրդատու դոկտ. Զաւէն Մարըլեան ակումբի անդամները առաջնորդեց դէպի Ճիպէյլի բերդը:

Մասնակիցները ունեցան նաեւ հաւաքական ճաշ մը:



| Ս. ԳԻՐՔԻ ԱՎՈՒՄԲ

17 Յունուար 2017-ին, Ս. Գիրքի ակումբի անդամները, առաջնորդութեամբ ակումբի խորհրդատու տիկին Հռութ Եունիսէսի, այցելեցին Սայտա եւ Մաղտուշի Մանթրայի վանքը:

Ս. Գիրքի ակումբի եւ Պատանեացի անդամները 16 եւ 17 Փետրուար 2018-ին ունեցան միօրեայ համագումար մը ԲԶԱԿ-ի մէջ: Առաջնորդներն էին

տիկ. Հռութ Եունիսէս, պր. Նժդեհ Մխսեան, օրդ. Կարին Ադամեան եւ պր. Լեւոն Պապիկեան:

Օրուան դասախօսն էր Հայկազեան համալսարանի հոգեւոր հովիւ Վեր. Wilbert, որ հետաքրքրական ձեւով ներկայացուց «Վստահութիւն առ Աստուած» նիւթը:

Մասնակիցները ունեցան նաեւ հաճելի ժամանակ՝ երգելով եւ խաղալով, ինչպէս նաեւ օգտակար գիտելիքներ ստանալով:

**Տիկնանց Ընկերային Յանձնախումբ
ՁԻՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ**



ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբի կազմակերպությամբ, խումբ մը տիկիներ 22 Փետրուարին մեկնեցան Զաարուրի շրջանը, ուր ունեցան ընկերային հաճելի պահ մը:

I ՃԱՏՐԱԿԻ ԵՐԿՈՒ ԱՆՈՅԵԱՆՆԵՐ

ՀԱԳ-ի 3-րդ եւ 6-րդ դասարաններու աշակերտներ Մարիլին եւ Նժդեհ Պալեան, ԼԵՎԱՄ-ի ճարտարակի մրցաշարքին հանդիսացան առաջին եւ երրորդ՝ իրենց փարիքային դասակարգումին մէջ:



**ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ**

Դպրոցս մեծապէս կը կարենորէ արտադպրոցական փարքեր գործունէութիւնները, իբրեւ կրթութեան օժանդակ միջոց:

Վերջին շրջանին, ՀԱԳ-ի աշակերտներ մասնակցեցան փարքեր մրցանքներու, որոնց ցանկը կը ներկայացնենք ստորեւ:

I Մանկական գիրքի պատրաստութեան մրցանք

- «Փոքրիկ Արփին» Գառնի Քէօշկերեան (9-րդ)
- «Փոքր Պարուհին» Սելին Համուտ (9-րդ)
- «Պուրպուր Թռչունը» Այգ Արզումանեան (9-րդ)
- «Լոռին ու Կախարդը» Լոռի Քէօշկերեան (8-րդ)

II «Միեր Զուլհաճեան» շարադրական մրցանք
Կարին Տէմիրճեան (10-րդ)

III «Խաչիկ Պապիկեան» Հայոց պատմութեան, Հայ մշակոյթի եւ Կրօնի մրցանք
Լոռի Քէօշկերեան (8-րդ)

IV Վանայ Զայնի «Ծիշդ Հնչենք» մրցանք
Նարէ Գարամանուկեան (8-րդ)
Էնտրու Նազարեան (7-րդ)
Արմինէ Քէշիշեան (6-րդ)

V «Սարդարապատից Արցախ» խորագիրով համահայկական շարադրութեան մրցոյթ
Կազմակերպուած Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան ու Սփիւռքի նախարարութիւններու եւ Երեւանի քաղաքապետարանի կողմէ:
Գարլա Պաստաճեան (10-րդ)
Կարին Տէմիրճեան (10-րդ)
Արիժ Սիտանի (9-րդ)
Աւօ Տէրտէրեան (9-րդ)
Գառնի Քէօշկերեան (9-րդ)

VI «Հայոց աշխարհի մայրաքաղաքները» համահայկական մանկապատանեկան նկարչական 8-րդ մրցոյթ-փառատօն
Կազմակերպուած Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան Գեղազիտութեան Ազգային կեդրոնի կողմէ:
Այգ Արզումանեան (9-րդ)
Եարա Եունէս (9-րդ)

VII Միշէլ Շիհա Շարադրական մրցանք (Անգլերէն)
Գաթրինա Տումանեան (12-րդ)
Կարին Տէմիրճեան (10-րդ)

▶ Նախկին աշակերտ, Ղազախիստանի մէջ Լիբանանի նախկին դեսպան Վազգէն Գավլաքեան 16 Նոյեմբեր 2017-ին Ղազախիստանի մայրաքաղաք Ասթանայի մէջ գտնուող «Քազկու» համալսարանէն պարգևատրուած է պատուոյ դոկտորայի վկայականով:




▶ Երկարամեայ նախկին աշակերտ Պետիկ Լոճիկեան 13 Նոյեմբեր 2017-ին Լիբանանի ՀՄԸՄ-ի ներկայացուցչական ժողովին ընտրուած է սոր Շրջանային վարչութեան անդամ:

▶ 1964-ի շրջանաւարտ, բանասէր, հրապարակագիր, վաստակատր կրթական մշակ Պարոյր Աղայաշեան 2017-ի վերջերուն լոյս ընծայեց իր կազմած ու խմբագրած «Յովհաննէս Աղայաշեան (Խիկար)» գիրքը (Պէյրոյթ, տպ. Քեստենեան, 608 էջ), նուիրուած իր հօրը (1909-1987):




▶ 15 Նոյեմբեր 2017-ին, Վարչապետ Հարիրիի հրաժարումէն ետք Լիբանանի հանրապետութեան նախագահ Միշէլ Աուն Պասայտայի պալատին մէջ ընդունեց տեղեկատուութեան



Ազգային Խորհուրդին մէկ պատուիրակութիւնը՝ խորհրդակցութեան համար: Հրախրեալներուն շարքին էր նախկին աշակերտ Միքայէլ Վայէճեան, որ տնօրէն է «Ռատիօ Մեան»-ին:

▶ Հրատարակիչ, «Հայոցի մատենաշար»-ի տէր եւ տնօրէն, 1979-ի շրջանաւարտ Խաժակ Գալուստեանի կողմէ վերահրա-

տարակուած է Խաչատուր Աբովեանի «Վերջ Հայաստանի» հատորի արեւմտահայերէնի վերածուած տարբերակը: Գիրքերը ձրիօրէն տրամադրուած են Լիբանանի, Սուրիոյ, Կիպրոսի, Յունաստանի, Քուէյթի եւ Պոլսոյ հայ դպրոցներու 8 – 12-րդ դասարաններու աշակերտներուն:



▶ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դեկտեմբերին կայացած Ազգային ընդհանուր ժողովին իրենց թեմերէն ընտրեալ պատգամատրներու շարքին էին 1969-ի շրջանաւարտ Վահէ Յովակիմեան (ԱՄՆ, Արեւմտեան թեմ), երկարամեայ նախկին աշակերտ Ատրուշան Արմէնեան (ԱՄՆ, Արեւմտեան թեմ), 1966-ի շրջանաւարտ Հրայր Պալեան (ԱՄՆ, Արեւմտեան թեմ), որ չէր կրցած մասնակցիլ, եւ երկարամեայ նախկին աշակերտ Տոքթ. Էլի Թաշճեան (Լիբանան): Ազգային ընդհ. ժողովի յատուկ նիստին



1978-ի շրջանաւարտ Տարօն Տէր Խաչատուրեան հանդէս եկած է «Սփիւռքի, անոր վերակազմակերպման, ինքնութեան ամրապնդման եւ Հայաստանի հետ գործակցութեան» նիւթին շուրջ ընդարձակ զեկուցումով մը:

▶ 1961-ի շրջանաւարտ Զաէն Պոյամեան Փասատենայի Ս. Սարգիս եկեղեցիի հովիւ Պօղոս քնյ. Պալթայեանէն, 21 Դեկտեմբեր 2017-ին, ծխական համայնքին կողմէ յուշանուէրի մը արժանացած է, իբր դպիր եկեղեցիին իր աւելի քան 30 տարիներու ծառայութեան համար: Առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան գնահատած է Զաէն Պոյամեանի անձնուէր ծառայութիւնը Լիբանանէն մինչեւ ԱՄՆ:

▶ 1973-ի շրջանաւարտ Անտրէ Ռուպեան 22 Յուլիս 2017-ին Նիւ Զըրզիի իր բնակարանին մէջ Հայկազեան համալսարանի առաջին նախագահ վեր. Դոկտ. Ջոն Մարգարեանի հարիւրամեակին առիթով ընդունելութիւն մը սարքած է: Այս առիթով նշենք, որ Անտրէին բնակարանը կը գարդարեն Յ. Այվազովսքիի բազմաթիւ արուեստի գործերը:




▶ Երկարամեայ նախկին աշակերտուի Լիլիթ Գոյումճեան Համազգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի բեմադրած Հենրիք Իբսենի «Ժողովուրդի թշնամին» թատերգութեան մէջ հանդէս եկած է Փեթրայի դերով, Յ. Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, Նոյեմբեր 2017-ին:

▶ ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի ներկայացուցիչ, 1978-ի շրջանաւարտ Տարօն Տէր Խաչատուրեան գլխաւոր բանախօսն էր Մոնթրէալի մէջ 21 Յունուար 2018-ին կայացած կուսակցութեան 127-ամեակին նուիրուած պաշտօնական հանդիսութեան:

▶ 2013-ի շրջանաւարտ նկարիչ Ճեյմս Տեկիքմենճեան (Տէկ կեղծանունով) մասնակցեցելով Winsor and Newton 2017 տարուան մրցանքին, շահած է երրորդ մրցանակը:

▶ Քրիստոնէական ջանից ընկերակցութեան 11 - 12 Նոյեմբեր 2017-ի պատգամատրական ժողովին, 2011-ի շրջանաւարտ ՀԱԳ-ի մնայուն ուսուցիչ Նժդեհ Մխսեան ՔՁ գործադիր մարմինի անդամ ընտրուած է 1 Յունուար 2018-էն սկսեալ:

▶ Հայկազեան համալսարանէն եկած 12 Փետրուար 2018 թուակիր նամակ մը կ'իմացնէ թէ շրջանաւարտներ Քրիստին Շահինեան (2014), Գարէն Քիրեճեան (2015) եւ Դավար Հայտօսթեան (2016) տեսչական



Haigazian University

February 12th, 2018

Dr. Armen Umeshlian, Principal
Armenian Evangelical College
Beirut

The Deans of the Faculties of Arts and Sciences and Business Administration & Economics Haigazian University are pleased to inform you that three of your former students attending new Haigazian University, have been placed on the Deans' Honor List during a Fall Semester 2017-2018. To be eligible for such honor, a student must be Full Time, receive minimum average of 83 and show high character profile. The total number of students placed on these lists was 37.

The Students are:

Student's Name	Major	Class	Average
Karadjan, Karen Kather	Bus. Administration - BBA	Junior	86.7
Shabian, Rita Christine Khachig	Political Science - BA	Junior	81.3
Haldjian, Talar Paul Ara	Bus. Administration - BBA	Sophomore	81.3

պատուոյ ցանկերու վրայ են 2017-2018-ի Ա. կիսամեակին:

▶ 3 Նոյեմբեր 2017-ին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը ընդունեց Հայ Աւետ. համայնքի եւ AMAA-ի ներկայացուցիչները Պըրպենքի (ԱՄՆ) Ս. Ղեւոնդեանց մայր տաճարի կեդրոնին մէջ: Հոն ի միջի այլոց խօսք առած է նաեւ 1970-ի շրջանաւարտ AMAA-ի նախագահ տոքթ. Նազարէթ Տարագճեան:

▶ ՀԱԳ-ի շրջանաւարտ, դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Ներսէս Պաղոտյեան Լիբանանի Հայ Աւետ. համայնքը կը ներկայացնէ Հայաստանի Ա. Հանրապետութեան հարիւրամեակի տօնախմբման Լիբանանի կեդրոնական մարմինին մէջ:

▶ 1974-ի շրջանաւարտ Սիլվի Թաթարեան Պէյրութի Ս. Էջմիածնի կրօնասէր տիկնանց համախմբումին կազմակերպած մէկ դասախօսական ձեռնարկին հանդիսավարն էր: Օրուան քանախօսն էր Մեղրիկ եպս. Բարիքեան, որ ներկայացուցած է Ս. Պատարագի խորհուրդը:

▶ 1955-ի շրջանաւարտ, դպրոցի պատուակալ տնօրէն, Հայաստանի Ազգ. գիտութիւններու ակադեմիայի արտասահմանեան անդամ Դոկտ. Զաւէն Մարրեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի համաժողովի ծիրէն ներս, 23 Մարտ 2018-ի նիստին զեկուցեց «Ղարաբաղը 1918 – 1921-ին ինչպէ՞ս ազերիներուն տրուեցաւ» նիւթին մասին, Անթիլիասի մայրավանքին մէջ:

ՄԱՀ

† 1952-ի շրջանաւարտ Հ. Գարակէօզեան հիմնարկութեան երկարամեայ նախկին պաշտօնեայ օրդ. Մելինէ Պեհեանիլեան (1933-2017) մահացաւ 1 Հոկտեմբեր 2017-ին, Պէյրութ:



† Յապաղումով իմացանք, որ 1957-ի շրջանաւարտ Արա Մշիկեան (1938-2016), մահացած է երկու փարի առաջ, ԱՄՆ-ի մէջ:



ՊԱԿ

□ Նախկին աշակերտ Ժողէ Գորսմոսեան պատկուցաւ Օրդ. Դուին Հագիսեանի հեղ. 7 Հոկտեմբեր 2017-ին Ս. Վարդանանց եկեղեցին մէջ, Պէյրութ:

□ 2005-ի շրջանաւարտ Օրդ. Սարին Ճըրլեան պատկուցաւ Պրն. Սեւակ Տէմիրճեանի հեղ. 12 Օգոստոս 2017-ին, Աթէնք:

ԲԱՆԵՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Երկարամեայ նախկին աշակերտ Վաչէ Սաղրեան եւ իր փրկիկը 1 Յունիս 2017-ին բախարատրուեցան առջինեկ մասն զաւակով մը՝ Ուիլիլմ, Պէյրութի մէջ:

«ՀԱԳ ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ ՄԱՐՐԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ»ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ...

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւէն ելք շնորհակալութեամբ սրացանք հետեւեալ նուիրատրութիւնները, մեծ մասը Արեւմտեան Ափի ՀԱԳ-ի շրջանաւարտից Միութեան միջոցով, կամ՝ ուղղակի դպրոցին:

	Ամ. Տոլար
Տէր եւ Տիկ. Տէյվիտ եւ Մարկրէթ Մկրուպեան (ԱՄՆ)	5,000
Տոքթ. Եւ Տիկ. Ռաֆֆի եւ Շաղիկ Յովհաննէսեան (ԱՄՆ)	1,000
Պրն. Սարգիս Եագուպեան (Գանատա)	500
Տիկ. Սոնա Թորոյեան (Իտալիա)	500
Պրն. Ներսէս Տերմենճեան (ԱՄՆ)	500
Տիկ. Արփի Շնորհօքեան-Սարեան (ԱՄՆ)	500
Տէր եւ Տիկ. Զարեհ եւ Յասմիկ Մահսերճեան (ԱՄՆ)	500
Տիկ. Հիլտա Քիրէճեան-Յարութիւնեան (ԱՄՆ)	500
Պրն. Ճորճ Տապաղ (ԱՄՆ)	300
Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Անայիս Գրանեան (ԱՄՆ)	300
Պրն. Յարութ Տէր Դաւիթեան (ԱՄՆ)	300
Պրն. Ֆիլիփ Թրփանճեան (ԱՄՆ)	300
Տիկ. Սոնա Փանոսեան (Գանատա)	200
Տիկ. Անահիտ Քիլճեան-Փօլատեան (Պէյրութ)	200
Տիկ. Յասմիկ Հալէպեան (ԱՄՆ)	200
Տոքթ. Եւ Տիկ. Վիգէն եւ Սօսի Ահարոնեան (ԱՄՆ)	200
Պրն. Ռաֆֆի Արոշեան (ԱՄՆ)	200
Տէր եւ Տիկ. Շահէ եւ Լետա Գրագիրեան (ԱՄՆ)	200
Պրն. Համբիկ Գէորգեան (Անգլիա)	150
Տիկ. Սեդա Պասմաճեան-Տէրեան (Գերմանիա)	100
Տիկ. Մարի Յովսէփեան-Աղոյեան (ԱՄՆ)	100
Տիկ. Արեգ Գազանճեան-Մոմճեան (ԱՄՆ)	100
Տիկ. Անի Պասմաճեան-Արոյեան (ԱՄՆ)	100
Տիկ. Անահիտ Թութիկեան-Մէյմարեան (ԱՄՆ)	100
Տիկ. Անի Վարժապետեան-Իսկենտերեան (ԱՄՆ)	100
Պրն. Միլո Տօնապետեան (Արաբ. Էմիրթ.)	100
Տիկ. Սոնա Մատենլեան (ԱՄՆ)	100
Պրն. Սարգիս Վահրատեան (Պէյրութ)	200,000
Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նելլի Զոունաճեան (Աւստրալիա)	50,000

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ մեր ուրախ առօրեային...

... ԲԱՐԵԿԵՆԴԱՆ՝ մանկապարտեզ եւ նախակրթարան



... ՊՏՈՅՑ ԴԷՊՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏԷԶ



... ՌԻՍՈՒՑՉԱԿԱԶՄԻՆ ՆԱԽԱՃԱՆ

ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ԱԶԴԱԿ օրաթերթի մանկապատանեկան յաւելում «Պզտիկ – Մզտիկ»-ի կազմակերպած հայերէնի «Ճիշդ գրենք» ուղղագրութեան մրցանքին մրցանակակիր աշակերտներու շարքին էին՝ ՀԱԳ-էն.



ԱՐՄԻՆԷ ՔԵՇԻՇԵԱՆ (6-րդ)
Գ. մրցանակ



ԱՆՏՐԷԱ ՏԵՄԻՐՃԵԱՆ (4-րդ)
Ա. մրցանակ



ԷՏԸՄ ՆԱԶԱՐԵԱՆ (4-րդ)
Գ. մրցանակ

► 5-րդ դասարանի աշակերտ Քրիստափոր Ալեմեգեան 4 Փետրուար 2018-ին, 3-րդ հանդիսանալով Լիբանանի Whushu Kung Fu-ի ակոյեանութեան, ստացած է պրոնզ մետալ:



ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

ԱՄՆ Արեւմտեան Ափի ՀԱԳ-ի Շրջ. Միութեան միջոցով _____
Տոքթ. Նազարէթ Տարագճեան (ԱՄՆ) 5000 տոլար
(2018-ի իր տարեկան յարկացումը)

«Սիփան» 2017-ի առ ի գնահատանք

Տիկ. Մարի Աղոյեան (ԱՄՆ) 25 տոլար

«Լրատու»ին առ ի գնահատանք

Տիկ. Շուշան Սամման (ԱՄՆ) 100 տոլար

Ուղղակի դպրոցին «Սիփան» 2017-ի առ ի գնահատանք _____

Տիկ. Նորա Զաղլասեան-Էքմէքճի (Պէյրութ) 200 տոլար

ՀԱԳ-ի «Արա Պալեան կրթական ֆոնդ»ին _____

Տիկին Սօսի Պալեան, տիար Արմէն Պալեան, տոքթ. Արման եւ դոկտ. Արաքս Գրիգորեան, տիար Ալեք եւ դոկտ. Շողակ Պալեան, օրիորդ Արշակուհի եւ Լուսին Տէր Խաչատուրեաններ 750,000 լ.ո.

Տիկին Յասմիկ Հալէպլեան 150 տոլար

Գոյլճի 6-րդ յարկի լսարեսողական սրահի նորոգութեան եւ կահաւորման համար 1967-ի շրջանաւարտները կը շարունակեն նուիրատուութիւններով սատարել ծրագրին:

Առ այդ, «Լրատու»-ի նախորդ թիւէն ի վեր, ԱՄՆ Արեւմտեան ափի Շրջ. Միութեան միջոցաւ ստացանք հետեւեալ գումարները.

- Տոքթ. Վիգէն Փուչիկեան 500 տոլար (բ. յարկացում)
- Պրն. Կարօ Գասարճեան 300 տոլար (բ. յարկացում)
- Տիկ. Նայիրի Պուպուսիս 300 տոլար (բ. յարկացում)
- Տոքթ. Վիգէն Ահարոնեան 300 տոլար (բ. յարկացում)
- Տիկ. Անի Արոյեան 300 տոլար

Նոյն նպատակով եւ նոյն շրջանին ուղղակի դպրոցին կատարուած են հետեւեալ փոխանցումները.

- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Սիլվա Ներսէսեաններ 1000 տոլար
- Պրն. Ատոմ Թնճուկեան 1000 տոլար (բ. յարկացում)
- Պրն. Աշոտ Ճերահեան 500 տոլար

«Լրատու»-ի յաջորդ թիւով, եթէ Տէրը կամի, կը ներկայացնենք սրահի նորոգութեան աշխատանքներու ամբողջացումին լուրը եւ կը հրատարակենք բարերարներու ամբողջական ցանկը:

Խմբագիր՝ ՏՏՕԵՆ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՆԵՇԼԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՍՐ ՆԵՐՍԵՍ ՊՊՏՐՈՅԵԱՆ
 Էջադրում՝ ՏԻՍՐ ՅԱՊՔ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 ԱՆԻ ՔԵՍԵՆԵԱՆ-ՊՍԵՒՅ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՅԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Y.M. Philibossian Armenian Evangelical College
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb